ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ (ԴԵՌԱՏԻՉԱՑԻՈՆ և ԴԵԶԻՆՍԵԿՑԻՈՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ>> ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՆ ԲԿԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/1»

ք. Երևան <<14>><<փետրվարի>>2017թ.

<< **ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը** >>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս **վարչության պետ** Ա. Օսիկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Երևանի կանխարգելիչ ախտահանում>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Պողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ախտահանման և մակաբույծների ոչնչացման» (դեռատիզացիա և դեզինսեկցիա) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից երեք օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2999300 (երկու միլիոն ինը հարյուր իննսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա

վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է *տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված* Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է *մինչև կողմերի սույն* պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի

[illegible]ելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **չորս** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն	<<Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ք. Երևան, Արշակունյաց-63	ՓԲԸ
ՖՆ աշխատակազմի գործառնական	ք. Երևան, Մ. Խորենացի 160
վարչություն	<<ՀայԷկոնոմԲանկ>> ԲԲԸ Երեբունի
Հ/Հ 900011175016	մասնաճ.
ՀԿՀՀ 02204739	Հ/Հ 163068101555
Վարչության պետ՝	ՀԿՀՀ 00402063
Ա. Օսիկյան	Տնօրեն՝
----------	Մ.Պողոսյան
(ստորագրություն)	----------
	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 14 >> <<փետրվարի>> 2017թ. կնքված
N«ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի №	Չափաբաժնի անվանումը	Չափի միավոր	Հասցեն	Սպասարկվող տարածքի մակերեսը ($մ^2$) Դեռատիզացիա	Սպասարկվող տարածքի մակերեսը ($մ^2$) Դեզինսեկցիա	Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
1	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ ՔԿ վարչություն)	Ք.մ.	ք.Երևան, Արշակունյաց-63	670	300	1.Ախտահանման և մակաբույծների ոչնչացման /դեռատիզացիոն/ ծառայություն օգտագործելով մեխանիկական մեթոդներ՝ թակարդներ , կպչուն կրծողաբռնիչներ և թունաքիմիկատներ՝ բրոդեֆան լանիրատ կամ համարժեք այլ նյութեր:Ծառայությունը մատուցել 26 անգամ՝ տարվա ընթացքում: 2. Ախտահանման և մակաբույծների ոչնչացման /դեզինսեկցիոն/ Ծառայություն՝ օգտագործելով մեխանիկական մեթոդ՝ կպչուն միջատաբռնիչներ, թունաքիմիկատներ ՝ ցիպերմետրին և համարժեք այլ ինսեկտիցիդներ: Ծառայությունը մատուցել 2-րդ ,3-րդ,4-րդ եռամսյակների ընթացքում՝ ընդամենը 5 անգամ : Օգտագործվող նյութերը և թունաքիմիկատները արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունները կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով եվ միջոցներով:
2	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	Արմավիրի մարզ Ք. Էջմիածին Չոբանքարա հողամաս	1730	800	
3	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Սեվան» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	Կոտայքի մարզ, ք. Հրազդան 50	800	400	
4	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	Արագածոտնի մարզ, գ. Կոշ	800	600	
5	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	Շիրակի մարզ, գ. Հառիճ	800	400	
6	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Երեվան, Նուբարաշենի խճ. 2	3070	2290	
7	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Վանաձոր, Տավրոսի 20, թիվ 50	670	300	
8	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Երեվան, Նուբարաշենի խճ. 7	1420	600	
9	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք. Գորիս, Նարեկացու-5	540	300	
10	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Երեվան, Արշակունյաց-2Ա	1200	1100	

11	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Աբովյան	540	300	
12	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Երեվան-կենտրոն» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	ք.Երեվան, Նալբանդյան -104	400	700	
13	Ախտահանման և մակաբույծների Ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿ հիմնարկ)	Ք.մ.	Կոտայքի մարզ, ք Հրազդան, Միկրոշրջան -45	670	370	
	ԸՆԴԱՄԵՆԸ	Ք.մ.		13310	8460	

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
2017թ Մարտ	2017թ Դեկտեմբեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ՓԲԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 160
<<ՀայԷկոնոմԲանկ>> ԲԲԸ Երեբունի մասնաճ.
Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 00402063
Տնօրեն՝
Մ.Պողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< 1-1 >> <<փետրվարի>> 2017թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ընթացքում՝ ընդ որում (ՀՀ դրամ)							
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ		ԸՆԴԱՄԵՆԸ
		դեռատիզացիա	դեռատիզացիա	դեզինսեկցիա	դեռատիզացիա	դեզինսեկցիա	դեռատիզացիա	դեզինսեկցիա	ՏԱՐԻ
1	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ ՔԿ վարչություն)	10050	36850	18000	63650	36000	87100	45000	132100
2	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկ)	25950	95150	48000	164350	96000	224900	120000	344900
3	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Մ՝ան» ՔԿ հիմնարկ)	12000	44000	24000	76000	48000	104000	60000	164000
4	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿ հիմնարկ)	12000	44000	36000	76000	72000	104000	90000	194000
5	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿ հիմնարկ)	12000	44000	24000	76000	48000	104000	60000	164000
6	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ)	46050	168850	137400	291650	274800	399100	343500	742600
7	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿ հիմնարկ)	10050	36850	18000	63650	36000	87100	45000	132100
8	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկ)	21300	78100	36000	134900	72000	184600	90000	274600

9	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿ հիմնարկ)	8100	29700	18000	51300	36000	70200	45000	115200
10	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ)	18000	66000	66000	114000	132000	156000	165000	321000
11	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿ հիմնարկ)	8100	29700	18000	51300	36000	70200	45000	115200
12	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Երևան-կենտրոն» ՔԿ հիմնարկ)	6000	22000	42000	38000	84000	52000	105000	157000
13	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ (ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿ հիմնարկ)	10050	36850	22200	63650	44400	87100	55500	142600
	ԸՆԴԱՄԵՆԸ	199650	732050	507600	1264450	1015200	1730300	1269000	2999300

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Երևանի կանխարգելիչ ախտահանում>>
ՓԲԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 160
<<ՀայԷկոնոմԲանկ>> ԲԲԸ Էրեբունի մասնաճ.
Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 00402063

Տնօրեն՝
Մ.Պողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<___>><<փետրվարի>> 2017թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
<<Երևանի կանխարգելիչ ախտահանում>> ՓԲԸ	ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Մ. Խորենացի 160	ք. Երևան, Արշակունյաց-63
<<ՀայԷկոնոմԲանկ>> ԲԲԸ Էրեբունի մասնաճ.	ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 163068101555	Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 00402063	ՀՎՀՀ 02204739

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Ախտահանման և մակաբույծների ոչնչացման» ծառայությունների մատուցում (այսուհետև՝ Ծառայություն)՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» « » 2017թ.

Պայմանագրի համարը՝ *«ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/1»*

Պատվիրատուն՝ <<***ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը***>>, ի դեմս ***վարչության պետ*** *Ա. Օսիկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա* և

Պայմանագրի կողմը՝ *«----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------*, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< 1.1 >> փետրվարի 2017թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԲԸԱՀՇՁԲ-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն